ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐԵՏ ԵՎ ՄՈՆԻԿ ԵՐԿԱՆՅԱՆՆԵՐԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ՝ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐԵՏ ԵՎ ՄՈՆԻԿ ԵՐԿԱՆՅԱՆՆԵՐԻՆ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն պարգև՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց սփամբուլահայ բարերարներ տեր և տիկին Արեթ և Մոնիկ Երկանյաններին:

«Մենք բարձր ենք գնահատում Երկանյանների ազգային և հայրենասիրական ոգին, որ նրանք դրսևորում են մեր սրբավայրերի պահպանման գործում: Մենք նաև քաջալերում ենք նրանց հոգատար վերաբերմունքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ»,- հանձնելով շքանշանը՝ բարերարներին ասաց Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը նշեց, որ աշխարհի ամենափարբեր վայրերում հանդիպել է սփամբուլահայերի, ճանաչել նրանց իբրև ճշմարիտ հայ քրիստոնյաներ ու Մայր Աթոռի հավատարիմ զավակներ, որոնք խորը նախանձախնդրություն են հանդես բերում ազգային արժեքների պահպանման գործում:

Երախտագիտություն հայտնելով պարգևի համար՝ տեր և տիկին Երկանյանները հավաստեցին, որ այսուհետ ևս հավատարիմ կմնան իրենց ուխտին և կծառայեն Հայ Եկեղեցուն:

Առաջին անգամ լինելով Հայաստանում՝ սփամբուլահայ բարերարներն այցելեցին նաև Սևանի Վազգենյան Դպրանոց, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի և Նորքի Հայորդյաց տուն, ծանոթացան Հայ Եկեղեցու գործունեությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ